Ասլանը ամենեւին չշարժոեցաւ իւր տեղից եւ ոչ ձեռքը տարաւ դէպի իր սուրը, նրա մի այսպիսի արհամարհանքը աւելի վիրաւորեց ինձ: Իսկ Սագօն, հեռու կանգնած, ծիծաղում էր: Նա բռնեց Ասլանի ձեռքից, եւ մի կողմ քաշելով, ասաց.

— Գնանք, չարժէ երեխայի հետ գործ ունենալ...:

Ես եւ Կարօն մնացինք մենակ: Ծերունի որսորդը, իւր դստեր հետ, մեզանից շատ առաջ լինելով, չհասկացաւ, թէ ի՞նչ անցաւ մեր մէջ:

Կարօն սկսեց խօսել, թէ իմ վրդովմունքը բոլորովին անտեղի էր. ես իզուր վիրաւորեցի իմ ամենալաւ ընկերներին, որոնք այնքան սիրում էին ինձ, որքան ինքը Կարօն: Նա ասաց, որ ես ոչ միայն Ասլանին յաղթել կարող չէի, այլ նոյնիսկ փոքրիկ Սագօն այնպէս ճարպիկ էր կռոի մէջ, որ անպատճառ ինձ կը սպանէր, միայն նրանք խնայեցին ինձ: Եւ երկար խրատներ կարդալուց յետոյ, նա աւելացրուց, թէ Սագօն մեղ չունէր, որովհետեւ մի քանի տարի է, որ նա սիրահարուած է Մարօի վրայ, թէեւ օրիորդը չէ համակրում նրան:

Ահա՛, այսքանը հասկացայ ես Կարօյի խօսքերից, որոնց մեծ մասն իմ նոյն րոպէի խորհուրդեան մէջ բոլորովին անըմբռնելի էին: Ես ամբողջ մարմնով դեռ դողում էի, իմ լեզուն, կարծես, կապուած էր, ես ոչինչ պատասխանել չկարողացայ:

— Դու դեռ ջահել ես, Ֆահրատ, քեզ ես չեմ մեղադրում, — աւելացրեց նա: — Քո ընկերները լաւ մարդիկ են, նրանք դարձեալ կը սիրեն քեզ եւ կը ներեն:

Դառնալով դէպի Կ. գիւղը, մեր ճանապարհն ընկաւ այն կողմից, ուր գտնւում էր ծերունի որսորդի որդեգրի՝ Հասօի ագարակը: Գիշերից բաւական անցել էր, երբ հասանք այնտեղ: Տղերքը վճռեցին գիշերել Հասօի ագարակում: Այնտեղ ծերունի որսորդի որդին շինել էր ճիւղերից հիւսած մի տաղաւար, որ խիստ յարմար օթեւան էր գարնան գիշերների համար:

— Մնացէք այստեղ ու քեփ արէք, — ասաց ծերուհին: Յետոյ աւելացրեց.

— Իմ հին ոսկորներն էլ չեն դիմանում գիշերոյ ցրտին, ես կերթամ տուն ձեզ համար գինի ու հաց կ'ուղարկեմ, խորովածի համար միս ունէք. իմ կենացն էլ կը խմէք, խօսք չկայ: Հասօ, լաւ պատոիր հիւրերիդ: Գնանք, Մարօ:

Նրանք դեռ չէին բաժանուել մեզանից, երբ Մարօն մօտեցաւ ինձ եւ հազիւ լսելի ձայնով շշնջաց իմ ականջին: